

րապետին վարքընըն իւզէրինէ, Թրիեստ 1796: 3. Ալահըն ազիզ քուլու քէօմիւրճեանց Տէր կոմիտաս քահանայըն վարքը, Թրիեստ 1798, Բ. տպ. կ. Պոլիս 1862: 4. Սուրբ Աստուածածինին մէօհթասէրի վարք: Եազըլտը Թիւրք տիլինտէ Ս. [տեփանոս] վ. [արդապետ] Ա. [վքէրեան] Ե. [պիսկոպոս] տան, Թրիեստ 1810: 5. Ստեփան Եպ. Ավգէրեան հազըէթէրինին քէնտի էլեազըսը իլէ Թէէլիֆ օլունան հիքեայէ: Սէնէ 1810: Իշպու հիքեայէնին սուրէթինի ալմըտըր կարապետ վրդ. Առաքելեան, 1882 Ըստամպօլտա: Վերջին ընդօրինակութիւնը կը գտնուի իմ քովս:

Տէրւի Շէրէն օղլու Միլէն վ. ի մասին (վերն էջ 182) կը գրէ 2ամէնան (էջ 813): “Կստէր ի սմին ժամանակի (1734—5) առաջնորդ անկիւրիոյ գաղատացւոց մովսէս վարդապետ շիրինեան, եւ խնամէր զՏօտ իւր ողջամիտ վարդապետութեամբ եւ խոհական մտօք, եւ ջանայր պահել զԺողովուրդն ի միութեան, ուստի եւ յեօթն եկեղեցիս գաղատիոյ սիրով կային երկաքանչիւր դապ ժողովրդոց, եւ ինքն մովսէս վարդապետ հասեալ ի ծերութիւն, եւ տուեալ բանիւ եւ գրով զուղիղ դաւանութիւն հաւատոյ՝ վախճանեցաւ եւ Թաղեցաւ պատուով ի վանս Ս. Աստուածածնի:” Այս Շիրինեան Մովսէս վ. “Սիմոն Ումուտեան Եպիսկոպոսին, ուրիշ եպիսկոպոսի մը, չորս ծայրագոյն վարդապետներու շատ մը միաբաններու եւ ամուսնացեալ քահանաներու եւ ոչ սակաւ ժողովրդեան հետ